

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Ա Ռ Ա Ն

ՃՀՄԱՐՑՈՒԹԻՒՆԸ որ այնչափ հարկաւոր և սակայն այնչափ անգիւտ բան եղած է, շատ հեղ չէ թէ չի գտնուիր՝ հապա չի ճանչցուիր։ Այս բանս կը նմանեցնէ մէկը՝ տղոց աչք կապուել խաղին . աչուրն երբ կապած տղան՝ ընկերներուն մէջ ժուռ գալով կը բռնէ մէկը, բայց թէ որ անոր անունը չի կրնար տալ, կը թողու ու ուրիշ մը բռնելու կը ջանայ։ Այսպէս ալ կը հանգիստի շատոնք՝ որ ճշմարտութիւնը կը բռնեն, բայց չի հաւատարկ թէ ան է՝ թող կուտան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՆԱԿ

ԱՐՁԱՆԱԳԻՐ

Ի Մանուկ Մարկիսեան։

ՅԱՊԱՆՈՐԷՍԾ գաւեցայ քաջակորով Մուշեղ Զրկեալ յիմոց գոռ վաշտուց ու ի կամարար ճերմակաց։

ԱՅՍ այն Մուշեղն է որուն Քաջակորով կը կանչէին . վարագրատ թագաւորը սպաննել տըւաւ սեղանի վրա . մեռնելու ատեն, կ'ըսէ պատմիչը՝ «Քաջ Մուշեղ մոնչելով ահագին և ակնա-
 ,, կառոյց լինէր և ասէր . Այս եղև հատուցումն
 ,, ի վերայ իմոց վաստակոցն, և արեան և քրտանցն,
 ,, որ փոխանակ դաստառակի սլաքով սրբէի զքեր-
 ,, տըն իմ։ Բայց զայս աւանդ տամանձին իմոյ, որ
 ,, ես Մուշեղ Մամիկոնեան նեղամահ կորեայ, և
 ,, ոչ հանգիսեցայ ի վերայ կամարար և ճերմակ
 ,, երկվարաց իմոց, և ձեռք իմ փութայր ըստ սրբ-
 ,, տի իմոյ, և արիւն իմ հեղոյր ի վերայ քրիստո-
 ,, նէից փրկութեան։ Եւ զայս ասացեալ բանս
 ,, արտասուաց՝ յիշելոյ արժանի, ի տալ և յառ-
 ,, նուլ շնչոյն աւանդեաց զհոգին աստուածառէրն
 ,, Մուշեղ զօրավարն հայոց և վարաց ։»

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ինչո՞ր գեանափոր տեղուանք ձմեռը տաք կ'ըլլայ ու ամառը զով։

— Վասն զի գեանափոր տեղուանք տարին տառուերկու ամիս գրեթէ նոյն բարեխառնութիւնը կը պահեն, այսինքն 10 աստիճան ջերմաչափին զրոյէն վեր։ Ուստի ամառը գրսի օդը ասկէ աւելի տաք ըլլալով, 20 կամ 25 աստիճան, բնական է որ աս գեանափոր տեղուանքը մտնելով զովութիւն մը կը

զգանք։ Իսկ ձմեռը ընդհակառակն գրսի ցուրտը զրոյէն վար կամ քիչ մը վեր ըլլալով երբոր գետնափոր տեղուանք կ'իջնանք, տաքութիւն կը զգանք։

Նոյնպէս է նաև հորէն նոր քաշած ջուրը որ ամառը մեզի պաղ կուգայ ու ձմեռը տաք, ուր ջրին աստիճանը ամենեկին չփոխուիր . վասն զի ամառը մենք աւելի տաք ըլլալով քան թէ նոր քաշուած ջուրը՝ մեզի պաղ կուգայ, իսկ ձմեռը մենք աւելի պաղ ըլլալով տաք կուգայ։

Ինչո՞ր կտոր մը աղ կրակը ձգելով կը ճարճատի։

— Վասն զի ասոր ջրային մասունքը մէկէնիմէ կ'ոլորոյն գառնալով կ'ընդարձակի և իրեն առաձգական զօրութեամբը ազին մէկալ մասունքը ճարճատեղով կտոր կտոր կ'ընէ։

ՏՕՄԱՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Տաճկաց Խաւան։ — Տաճկաց և Արարացոց թուականը, որ հիճրէի ալ կ'ըսուի, Մահմէտին Մեքքէէն Մէտինէ քաշուած տարիէն կը սկսի, որ Քրիստոսի 622 թուականին կ'իյնայ։ Բայց որովհետեւ հիճրէթին տարիները լուսնական են, անոր համար ամիսներն ալ փոփոխակի 30 ու 29 օր ունին, որ ամէնը մէկտեղ տասուերկու ամսուան մէջ՝ 354 օր կ'ըլլան, որով մէկ լուսնական տարին արեւգակնային տարիէն 11 օր պակաս կ'ըլլայ։ Ասկէց է որ Տաճկաց Մուհարրէմ ամիսը, որ իրենց տարեմուտն ու առաջին ամիսն է, միշտ փոփոխական է, տարւոյն ամէն եղանակաց մէջ կը թափառի . և համեմատութեամբ արեւգակնային ամսոց ու տարւոյն, ասոնք ոչ հաստատուն ամսամուտ ունին և ոչ տարեմուտ, վասն զի ամէն տարի 11 օր կը յառաջեն, որ իրեք տարուան մէջ գրեթէ ամիս մը կ'ընէ, ու երեսունուիրեք տարուան մէջ՝ տարի մը . ուստի մեզի որ 33 տարի է իրենց 34 է, և մէկն որ 33 տարուան է, իրենց հաշուով 34 տարուան կ'ըլլայ։

ՀԱՆԵԼՈՒԿ

ԲՈՒՈՐԱԿ պարտէզ

Երկդըռնի,

Յանգ իւր փըշագէշ,

Ջուրն աղի։

ՕԳՈՍՏՈՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԱՂԵՂՆ